Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 1634-Լ 06. 09. 2026 թ.

2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ (ՀԵՌԱԿԱ) ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՈՐՈՇ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով ՀՊՄՀ գիտական խորհրդի 05.09.2022թ. թիվ 1 որոշմամբ հաստատված մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության և ուսումնառության կազմակերպման կարգի 2.4 կետը, ինչպես նաև ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Սահմանել 2026-2027 ուսումնական տարվա առկա (հեռակա) ուսուցմամբ մագիստրոսի հետևյալ կրթական ծրագրով ընդունելության պահանջները.

1. «031301.04.7 Զինվորական հոգեբանություն», «031301.06.7 Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա», «031301.07.7 Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն», «031301.08.7 Սոցիալական և քաղաքական հոգեբանություն», «031301.10.7 Գործնական հոգեբանություն», «031301.11.7 Իրավաբանական հոգեբանություն», «031301.12.7 Ընտանիքի հոգեբանություն», «031301.02.7 Մանկավարժական հոգեբանություն», «031301.05.7 Կառավարման հոգեբանություն», «031301.15.7 Ճգնաժամային հոգեբանություն և միջամտություն» մագիստրոսական կրթական ծրագրերում առաջին փուլի անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ «031301.01.6 Հոգեբանություն» մասնագիտությամբ առկա և հեռակա ուսուցման վերջին երեք տարվա շրջանավարտները, իսկ առկա (երկրորդ փուլով) և հեռակա ուսուցմամբ՝ ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված

մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները։ Այլ որակավորում ունեցող դիմորդները պետք է անցնեն մասնագիտական հարցազրույց։

2. «031301.03.7 Հատուկ հոգեբանություն», «031301.13.7 Էրգոթերապիա», «011302.06.7 Արտթերապիա», «011302.05.7 Հատուկ մանկավարժություն» մագիստրոսական կրթական ծրագրերում առաջին փուլի անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ «031301.01.6 Հոգեբանություն» «011302.01.6 Սուրդոմանկավարժություն», «011302.02.6 Տիֆլոմանկավարժություն», «011302.03.6 Օլիգոֆրենոմանկավարժություն» «011302.04.6 Լոգոպեդիա» մասնագիտություններով առկա և հեռակա ուսուցման վերջին երեք տարվա շրջանավարտները, իսկ առկա (երկրորդ փուլով) և հեռակա ուսուցմամբ՝ ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները։ Այլ որակավորում ունեցող դիմորդները պետք է անցնեն մասնագիտական հարցազրույց։

3. «011101.05.7 Կրթության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրերում առաջին և երկրորդ փուլերի անվճար և վճարովի ուսուցման համակարգերի մրցույթին կարող են մասնակցել առկա և հեռակա ուսուցման ձևերում ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները՝ անցնելով մասնագիտական հարցազրույց։

4. «054201.06.7 Լանդշաֆտային պլանավորում» մագիստրոսական կրթական ծրագրում առաջին փուլի անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ «011401.03.6 Աշխարհագրություն», «052101.01.6 Շրջակա միջավայրի գիտություններ» մասնագիտություններով առկա և հեռակա ուսուցման վերջին երեք տարվա շրջանավարտները, իսկ առկա (երկրորդ փուլով) և հեռակա ուսուցմամբ՝ ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները։ Այլ որակավորում ունեցող դիմորդները պետք է անցնեն մասնագիտական հարցազրույց։

5. «041301.06.7 Պրոդյուսերական գործ» մագիստրոսական կրթական ծրագրում առաջին փուլի անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ «021503.02.6 Ռեժիսուրա», «041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)» մասնագիտություններով

առկա և հեռակա ուսուցման վերջին երեք տարվա շրջանավարտները, իսկ առկա (երկրորդ փուլով) և հեռակա ուսուցմամբ՝ ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները: Այլ որակավորում ունեցող դիմորդները պետք է անցնեն մասնագիտական հարցազրույց:

6. «011401.24.7 Իրավագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրում առաջին փուլի անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթին կարող են մասնակցել ՀՊՄՀ «011401.18.6 Պատմություն», «011401.08.6 Հասարակագիտություն» մասնագիտություններով առկա և հեռակա ուսուցման վերջին երեք տարվա շրջանավարտները, իսկ առկա (երկրորդ փուլով) և հեռակա ուսուցմամբ՝ ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները: Այլ որակավորում ունեցող դիմորդները պետք է անցնեն մասնագիտական հարցազրույց:

7. Մասնագիտական քննությունների(հարցազրույցների) անցակցման համար ձևավորել համապատասխան հանձնաժողովներ՝ ըստ կրթական ծրագրերի: Հանձնաժողովների կազմում ներառել մասնագիտական ամբիոնի վարիչին, քննող դասախոս և ընդունող հանձնաժողովի ներկայացուցչին:

8. Մասնագիտական քննությունների(հարցազրույցների) հարցաշարերը հաստատել մասնագիտական ամբիոններում և հրապարակել պաշտոնական կայքի դիմորդ բաժնում:

ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

X _____

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ